ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հոկտեմբերի 11-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Հասմիկ Միհրդատի Հարությունյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Մարիանա Ռաֆիկի Քոչարյանի «Հանրային կառավարման համակարգի զարգացման ժամանակակից միտումները. տեսություն և պրակտիկա»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ուսումնական ձեռնարկի հեղինակներն անդրադարձել են հանրային կառավարման ըմբռնման տեսական և գործնական մոտեցումներին, հանրային իշխանության բնույթին և դրա կազմակերպման սկզբունքներին ժողովրդավարական պետություններում: Հաշվի առնելով քաղաքացիական հասարակության և հանրային ծառայության համակարգի վիթխարի դերակատարությունը հանրային կառավարման մարմինների կազմավորման ու նրանց գործունեության արդյունավետության ապահովմանը հետամուտ լինելու կարևոր գործընթացներում՝ ուսումնական ձեռնարկի հեղինակները հանգամանորեն հետազոտել են մեր հանրապետությունում հանրային կառավարման և հանրային ծառայության համակարգի գործունեության առանձնահատկությունները: Կարևորվել են նաև տեղեկատվական հասարակության ձևավորման, գործունեության օրենսդրակառուցվածքային կարգավորումների յուրահատկությունները և գնահատվել դրանց գործունեության նպատակասլացությունը քաղաքացիական հասարակության ու հանրային կառավարման զարգացման գործում: Հերթական անդրադարձն այդ մշտապես արդիական հարցերին նպատակ ունի ուրվագծելու Հայաստանում անկախ պետականության վերականգնման և հանրային կառավարման զարգացման միտումները:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Ա.Ա.Ասատրյանց՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջազգային համագործակցության և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) Ա.Ս.Սարիբեկյան՝ Երևանի պետական համալսարանի կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու:

3) Վ.Ս.Ալեքսանյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը հայալեզու ամբողջական մի աշխատություն է, որտեղ համակողմանիորեն քննարկված են հանրային կառավարման ոլորտին առնչվող տեսական և գործնական բնույթի բազում հարցեր, ուսուցանվում են այնպիսի հմտություններ, ինչը հետաքրքրական կլինի ոչ միայն ուսանողների, դասախոսների, այլև հանրային կառավարման ոլորտում քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ զբաղվող մասնագետների համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Տ.Ս.Մարտիրոսյանը, Վ.Կ.Աթոյանը, դոցենտներ Պ.Ա.Քալանթարյանը, Ա.Վ.Գրիգորյանը, Խ.Ա.Մխիթարյանը, Գ.Ս.Ասլանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, կառավարման ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Հասմիկ Միհրդատի Հարությունյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Մարիանա Ռաֆիկի Քոչարյանի «Հանրային կառավարման համակարգի զարգացման ժամանակակից միտումները. տեսություն և պրակտիկա»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 100 օրինակ տպաքանակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. հոկտեմբերի 11
Երևան